# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046 , tumanyan.lori@mta.gov.am

N 166
*02 նոյեմբեր 2015թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ

Հարգելի պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու թիվ 35 -38-Ա որոշումները:

Առդիր՝ 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 35

### ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով`համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2015թվականի հոկտեմբերի 30-ի նիստի օրակարգը.

1. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 –Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ <<ԹՔ-ՊԸԱՇՁԲ-15/3>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՆՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
5. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 36-Ն

## ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ <<ԹՔ-ՊԸԱՇՁԲ-15/3>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՆՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդված 5-րդ մասի 2-րդ կետով (այն է՝ ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, քանի որ գնման պարզեցված ընթացակարգի կիրառման արդյունքում պայմանագիր կարող է կնքվել առնվազն 15 օրացուցային օր հետո, իսկ աշխատանքները ըստ ծրագրի պետք է ավարտվեն մինչև սույն թվականի նոյեմբերի 15-ը) ,հիմք ընդունելով ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության 3-րդ բաժնի կողմից Թումանյանի քաղաքապետարանի կողմից քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ձեռքբերման<<ԹՔ-ՊԸԱՇՁԲ-15/3>> ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկանքը և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 23.10.15թ. N 02/20/18166-15 գրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

Հանձնարարել Թումանյան համայնքի ղեկավար Լ.Զավարյանին.

1. Թումանյանի քաղաքապետարանի կողմից քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ձեռքբերման <<ԹՔ-ՊԸԱՇՁԲ-15/3>> ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի ընտրված մասնակից «Անդրեասյանշին» ՍՊԸ-ի հետ 13.10.2015թ. կնքված <<ԹՔ-ՊԸԱՇՁԲ-15/3>> ծածկագրով գնման պայմանագիրը 2-րդ չափաբաժնի մասով լուծարել և կազմակերպել գնման նոր ընթացակարգ:

2.Թույլատրել վերոհիշյալ աշխատանքների ձեռքբերման գնման գործընթացը կազմակերպել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնման ձևով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ

2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ

4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ

5. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
Հեռ. (098) 048046, tumanyan.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<< 30 >> ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի N 37 -Ն

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ.ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և << ՀՀ բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի 2015 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները .

1. Վարչական մասի եկամուտներում՝

   1) Ավելացնել գույքահարկ ֆիզիկական անձանցից փոխադրամիջոցների համար նախատեսված եկամուտը 350.0 հազ. դրամով սահմանել այն 2344.5 հազ.դրամ.

   2) Պակասեցնել համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ,ուժեղացման , վերականգնման,արդիականացման աշխատանքներ(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար նախատեսված եկամուտը 20.0հազ. դրամով.

   3) Պակասեցնել վարչական գանձումների համար նախատեսված եկամուտը 20.0 հազ. դրամով.

2. Վարչական մասի ծախսերում՝

   1) Ավելացնել<< Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում >> 1.1.1 դասակարգման << Ներքին գործուղումներ(հոդ.4221) >> հոդվածով ծախսերը 50.0 հազ. դրամով, սահմանել այն 500.0 հազ.դրամ.
   2) Ավելացնել<< Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում >> 1.1.1 դասակարգման << Արտաքին գործուղումներ(հոդ.4222) >> հոդվածով նախատեսված ծախսերը 200.0 հազ. դրամով, սահմանել այն 200.0 հազ.դրամ.

3) Ավելացնել << Սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող)>> 10.7.1 դասակարգման (հոդ.4729) ծախսերը 60.0 հազ. դրամով, սահմանել այն 860.0 հազ. դրամ.

3. Ֆոնդային մասի ծախսերում՝

1)Ավելացնել < Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում>> <<Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը>> 1.1.1 դասակարգման << Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում >> 5113 հոդվածով ծախսերը 481.7 հազ. դրամով, սահմանել այն 10881.7 հազ.դրամ.
մ:

2) Պակասեցնել << Ճանապարհային տրանսպորտ>> 4.5.1 դասակարգման համար նախատեսված ծախսերը 481.7 հազ. դրամով, սահմանել այն 564.0 հազ.դրամ .

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ- 0

1.ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ

2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

3.ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ

4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ

5. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 38-Ա

## ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Գույքահարկի մասին օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյան քաղաքի բնակիչ,սոցիալապես անապահով Էդիկ Ավետիքյանին ազատել անհատական օգտագործման ավտոմեքենայի գույքահարկի վճարումից.
-հարկատուի գրանցման և գույքի գտնվելու վայրը՝ ք. Թումանյան
-ՀՎՀՀ S0500135
-արտոնության գումարի մեծությունը՝ 18834 դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
5. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ